ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 28 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ _____ առ “ ” _____ 2024թ.

«ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ
տնօրեն
Գ. Ռուբենյանին

(№ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-83/24-1-01/246 պայմանագիրը միակողմանի լուծման մասին)

Հարգելի՛ պարոն Ռուբենյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության և «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության միջև 2024 թվականի հունիսի 25-ին կնքվել է №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-83/24-1-01/246 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարել Պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները (Պայմանագրի 1.1 կետ):

Պայմանագրով սահամանված է.

- Գնորդն իրավունք ունի՝

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

- 2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի անբաժան մաս կազմող Հավելված 2-ով ապրանքի մատակարարման ժամկետը սահմանված է՝ «մուտքի թույլտվություն ստանալուց հետո 90 աշխատանքային օրվա ընթացքում», իսկ պայմանագրի անբաժան մաս կազմող հրավերի համաձայն «Վաճառողը պարտավոր է՝ լրացուցիչ համաձայնագիրը կնքելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել ՀՀ կառավարության թիվ 744-Ն առ 09.06.2005թ ընդունած որոշման հիման վրա ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտներում աշխատանքներ իրականացնող անձանց

հուսալիության ստուգման համար անհրաժեշտ փաստաթղթերը», սակայն մինչև օրս վերը նշված պարտավորությունները Ձեր կողմից չեն կատարվել:

Հաշվի առնելով Պայմանագրի դրույթները՝ տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության կողմից միակողմանի լուծվում է «ՀԱԷԿ» ՓԲԸ և «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի հունիսի 25-ին կնքված № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-83/24-1-01/246 պայմանագիրը և առաջարկում եմ ծանուցվելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության «Կոնվերս բանկ» ՓԲԸ 1930000199200100 հաշվեհամարին վճարել պայմանագրի (1 683 497,5 ՀՀ դրամ) և որակավորման (2 525 246,25 ՀՀ դրամ) ապահովումները:

Հարգանքով՝

ԳՏՏ - ԸՀԳՏ Ս. Մաթևոսյան

Կատ.
ԳԸԲ գլխավոր մասնագետ –
խմբի ղեկավար
Հռիփսիմե Ռամազյան
Հեռ. 010-20-04-91